ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 7-ին՝ երեքշաբթի օրը, *Մայր Աթոռում հրավիրվել էր ներքին թեմերի առաջնորդների, թեմական ու եկեղեցական խորհուրդների տարեկան ժողով՝ տնտեսական ընթացիկ տարվա առիթով։*

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո գումարված խորհրդակցական ժողովը տևեց մարտի 7-ից 10-ը, և որին մասնակցում էին՝

1. Մայր Աթոռից. Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, մայրավանքի գլխավոր բաժինների պատասխանատու ղեկավարները, այդ թվում՝ հոգևոր ճեմարանի տեսուչը, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, դիվանապետը, գլխավոր ճարտարապետը, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչները։

2. Արարատյան թեմից. առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպիսկոպոսը, թեմական խորհրդի անդամները, իրավաբան Ս. Արևշատյանը, Պ. Պողոսյանը, Վ. Վարդանյանը և Գեղարդի վանքի վանահայր տ. Վաղարշակ քահ. Բղումյանը։

3. Շիրակի թեմից. թեմական առաջնորդ տ. Մաշտոց եպիսկոպոսը, թեմականներ՝ Հովհ. Փելթեկյանը և Հ. Ալեքսանյանը։

4. Վրաստանի թեմից. թեմական առաջնորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսը, թեմական խորհրդի անդամներ՝ գրող Ս. Ավչյանը, Ս. Իսախանյանը և Գ. Դուրգարյանը։

5. Ադրբեջանի հայոց թեմից. թեմական առաջնորդ տ. Հուսիկ եպիսկոպոսը, թեմական Հ. Աթաջանյանը և տ. Գրիգոր քահ. Անանյանը։

6. Ռուսաստանի և հյուսիսային Կովկասի հայոց թեմից. թեմական առաջնորդ տ. Պարգև եպիսկոպոսը, թեմականներ՝ Զ. Ասատուրովը, Գ. Գևորգյանը (Մոսկվա) և Ս. Մելքոնյանը (Օրջոնիկիձե)։

Մարտի 7-ին՝ երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը վեհարանում բարեհաճեց ընդունել, ըստ թեմերի, առաջնորդներին և թեմականներին՝ զրուցելու համար ներքին թեմերի հոգևոր-եկեղեցական, վարչական, տնտեսական և այլ հարցերի շուրջ։

Առավոտյան ժամը 11.30-ին տեղի ունեցավ թեմերի 1966 թվականի բյուջեի կատարողականի և 1967 թվականի նախահաշիվների ներկայացումը։

Երեկոյան ժամը 7.30-ին բոլոր պատգամավորները ներկա եղան Երևանում, համերգային դահլիճում, հայկական երգի և պարի անսամբլի համերգին։

Մարտի 8-ին՝ չորեքշաբթի օրը, *առավոտյան ժամը 8-ին, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, պաշտվեց «արևագալ»-ի հանդիսավոր ժամերգությունը, որին ներկա էին Մայր Աթո-*



Վեհափառ Հայրապետը շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, թեմական առաջնորդներով և պատգամավորներով։

ոի ողջ միաբանությունը, բոլոր թեմական առաջնորդներն ու պատգամավորները։

«Արևագալ»-ի զմայլելի երգերը ապրումով կատարեցին հոգևոր ճեմարանի սաները։

Արարողության ավարտին Ռուսաստանի և հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ տ. Պարգև եպիսկոպոսը քարոզեց «Բարւոք է մեզ աստ լինել» բնաբանով՝ ծանրանալով Մայր Աթոռ ս. Էջմիածնի հավատքի, հայրենասիրության և ազգապահպանման օջախ լինելու սրբազան առաքելության վրա։ Քարոզի վերջում սրբազանը, հանուն Վեհափառ Հայրապետի, ողջունեց Մայր Աթոռ ժամանած պատգամավորներին և ժողովի մասնակիցներին։

Ժամը 11-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, գումարվեց ներքին թեմերի խորհրդակցական ժողովը։

Ժողովը բացվեց Հայոց Հայրապետի աղոթքով։ Ն. Ս. Օծությունը ապա ջերմորեն ողջունելով եկեղեցական և աշխարհական պատգամավորների ներկայությունը՝ հաջողություն մաղթեց ժողովի աշխատանքներին, շեշտելով նման խորհրդակցության կարևորությունն ու անհրաժեշտությունը, ներքին թեմերի եկեղեցական, վարչական աշխատանքների բարելավման տեսակետից։

Թեմական բոլոր առաջնորդները խոսք առնելով ողջունեցին խորհրդակցական ժողովը հրավիրումն ու բացումը։

Ապա Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ և գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյայանը ժողովին ներկայացրեց, ըստ թեմերի և գլուխ առ գլուխ, 1966 թվականի Մայր Աթոռի և ներքին թեմերի բյուջեների կատարողականը և 1967 թվականի նոր բյուջեների նախահաշիվները։

Կատարողականի և նոր բյուջեի նախահաշիվների շուրջ կատարվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին առաջնորդներն ու պատգամավորները։

Յուրաքանչյուր թեմի կատարողականի քննարկումից հետո Վեհափառ Հայրապետը ամփոփեց արդյունքները՝ հայտնելով Իր գոհունակությունը թեմերում կատարված եկեղեցական, տնտեսական, կազմակերպչական աշխատանքների բարի արդյունքների և կանոնավորության մասին, անելով նաև մի շարք կարևոր թելադրություններ տնտեսական նոր տարվա առիթով։

Ժամը 15-ին, վանական սեղանատանը, բոլոր պատգամավորները հյուրասիրվեցին ավանդական հերիսայով և թանապուրով։

Մարտի 9-ին՝ հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, ժողովն ավարտեց իր աշխատանքները։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդես եկավ 1965—1966 թվականի Մայր Աթոռի եկեղեցական, հոգևոր, մշակութային, շինարարական և տնտեսական կյանքի վերաբերյալ համառոտ զեկուցումով, որը լսվեց երախտագիտությամբ և շնորհակալությամբ։ Ն. Ս. Օծությունը իր զեկուցման մեջ կանգ առավ նաև 1967 թվականի Մայր Աթոռի գործունեության ընդհանուր գծերի վրա՝ ըստ բնագավառների։ Հայոց Հայրապետը իր զեկուցագիրը ավարտեց լավատեսությամբ՝ խոսելով նաև հայ եկեղեցու վերաբերյալ մի շարք ընդհանուր հարցերի վրա, որոնք սերտորեն կապված են Մայր Աթոռի առաքելության, զեկավար դերի և հայ եկեղեցու միության է՛լ ավելի կազմակերպման աշխատանքների հետ։

Մայր Աթոռում գումարված ներքին թեմերի խորհրդակցական ժողովը իր աշխատանքներն ավարտեց խմբովին երգված Տերունական աղոթքով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Ժամը 16-ին, վեհարանում, Ն. Ս. Օծությունը բարեհաճել էր իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը, թեմական առաջնորդներին ու պատգամավորներին՝ շուրջ 40 հոգու։ Սեղանների շուրջ ստեղծվեց վանական, ջերմ մթնոլորտ։ Բաժակներ առաջարկվեցին Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, պայծառության և Հայոց Հայրապետի կենաց։ Ողջույնի ջերմ խոսքեր ասացին տ. Հայկազուն, տ. Կոմիտաս, տ. Վահան սրբազանները, տ. Ներսես ծ. վարդապետը, պատգամավորներ Զ. Ասատուրովը, տ. Գրիգոր քահ. Անանյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիրը։

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված «Էջմիածինն ի հօրէ» շարականով ու Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Երեկոյան ժամը 7.30-ին բոլոր պատգամավորները Երևանում, Գ. Սունդուկյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական ակադեմիական թատրոնում դիտեցին «Վիտոշի փեշերին» ներկայացումը։

Մարտի 10-ին՝ ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, պատգամավորները ուխտի գնացին Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը։

Ժամը 16-ին հոգևոր ճեմարանում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկույթ՝ ի պատիվ պատգամավորների։

Որոշյալ պահին ժամանում է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված թեմական առաջնորդներով ու պատգամավորներով, և

ընդունվում ուսանողական ջերմ ու սրտագին ծափերով:

Հանդիսության բացումը կատարում է տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը, որը ողջունելուց հետո ճեմարանի հարկի տակ Վեհափառ Հայրապետի, թեմակալ առաջնորդների և բոլոր պատգամավորների ներկայությունը, խոսում է հոգևոր ճեմարանի անցքերի, ներկա կյանքի և ապագա գործունեության ու ծրագրերի մասին, շեշտելով թեմերի օժանդակությունն ու աշխատանքը ճեմարանի համար խոստումնալից, հավատավոր ու բարեհույս ուսանողներ ընտրելու և հանձնարարելու գործում:

Ապա գործադրության է դրվում ուսանողության ուժերով կազմակերպված գեղարվեստական ծրագիրը, որը բաղկացած էր խմբերգերից, արտասանություններից, նվագից ու ուղերձից: Բ դասարանի ուսանող Ս. Մեղիազարյանը արտասանում է Հովհ. Հովհաննիսյանի «էջմիածին»-ը, Ա լսարանի ուսանող Հովհ. Գրիգորյանը՝ Համո Սահյանի «Երգ Հայաստանի»-ն, Ա դասարանի ուսանող Տրդատ Շամլյանը՝ Եղիշե արքեպ. Դուրյանի «Օշական»-ը, և մի խումբ ուսանողներ կատարում են խմբական մի արտասանություն՝ «Զրույց վանականի և հրաշքի մասին»: Ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Հ. Անասյանի ղեկավարությամբ, կատարում է «Գութանի երգ», «Գարուն ա» «Ա՜խ, մարալ ջան», «Իմ Արարատ» և «Ճեմարանի քայլերգ» խմբերգերը, ինչպես նաև ռուսական և ուկրաինական ժողովրդական երգեր: Ա լսարանի ուսանող Ա. Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է Ա. Տիգրանյանի «Հեյդարի»-ն, իսկ Գ դասարանցի Վարդան Տյոլեկյանը՝ «Օրորոցային»-ը: Բ լսարանի ուսանող Ա. Մարտիրոսյանը ընթերցում է հանուն ճեմարանի «Բարի գալստյան» մի ուղերձ:

Ճեմարանի գրական-գեղարվեստական երեկույթը խոր տպավորություն է թողնում բոլորի վրա: Հանդիսությունը փակում է Վեհափառ Հայրապետը՝ գոհունակության ու շնորհակալության ջերմ խոսք ասելով հոգևոր ճեմարանի տեսչությանը և ուսանողությանը՝ հանդեսի պատճառած հոգեկան գեղարվեստական հաճույքի համար:

Ժամը 18-ին, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հսկումի հանդիսավոր արարողություն, որին ներկա եղան բոլոր եկեղեցական և աշխարհական պատգամավորները: Արարողության ավարտին վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսը քարոզեց «Ոչ եկի պաշտօն առնուլ, այլ պաշտել» բնաբանով:

Մարտի 11-ին՝ շաբաթ օրը, թեմակալ առաջնորդներն ու պատգամավորները, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից, վերադառնում են իրենց թեմերը նոր եռանդով և խորը պատասխանատվությամբ շարունակելու իրենց թեմական աշխատանքները: